Հավելված 1

Հաստատված Ստեփանավան համայնքի ավագանու

«13» ապրիլի 2018թ. թիվ 33-Ն որոշմամբ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 2018-2022 թթ.

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ

# Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք....3
2. Ստեփանավան համայնքի իրավիճակի նկարագրություն....4
2.1. Ստեփանավան քաղաքի ընդհանուր  նկարագրություն....4
Ուրասար գյուղի ընդհանուր նկարագրություն....5
Կաթնաղբյուր գյուղի ընդհանուր նկարագրություն....6
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը....8
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը....24
2.4. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ....27
2.5. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն....29
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում....30
3.1. Համայնքի զարգացման տեսլական....30
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ....31
4. ՀՀԶԾ ֆինանսավորում....48
5. ՀՀԶԾ մոնիթորինգ....48

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Ստեփանավան խոշորացված համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ նախատեսված 2018-2022թթ. համար, իր մեջ ներառում է համայնքի պատմաաշխարհագրական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական բնութագիրը, տնտեսական զարգացման միջոցները, համայնքային իրավասությանը ենթակա հատվածի և համայնքում գործող այլ կազմակերպությունների ու կառույցների՝ համայնքի զարգացմանը նպաստող մեխանիզմների մշակումը, տնտեսության առանձին ճյուղերի, նյութատեխնիկական, բնապահպանական, արտադրական ծառայությունների, միջհամայնքային և արտասահմանյան ծրագրերի, տուրիզմի և ժամանցի կազմակերպման, կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման, ֆինանսական, քաղաքաշինական, կադրային, առևտրի, սպասարկման, կրթական, մարզամշակութային և այլ համալիր ծրագրերի զարգացման ուղիները, համայնքի տարբեր ոլորտների նկարագիրը և 2018-2022թթ. ակնկալվող առաջընթացը:

Մեր խոշորացված համայնքի զարգացումը ինչպես առաջիկա 5 տարիներին, այնպես էլ առհասարակ, տեսնում եմ տուրիզմի զարգացման մեջ, ինչի համար առաջին հերթին անհրաժեշտ է զարգացնել ենթակառուցվածքները, մասնավորապես՝ նորոգել, վերակառուցել ճանապարհները, ստեղծել արդիական ժամանցի վայրեր, զարգացնել և խրախուսել հյուրանոցային բիզնեսը, ինչպես նաև ստեղծել առավել նպաստավոր պայմաններ հովեկների համար, որի համար նախատեսում ենք առաջիկա 5 տարիներին առավել մեծ ուշադրություն դարձնել քաղաքաշինությանը, գյուղատնտեսության զարգացմանը: Համայնքի տարածքում հնարավոր է էլ ավելի զարգացնել փոքր ու միջին բիզնեսը. հաջողությամբ կարող են գործել կարի, հացամթերքի, խմորեղենի, գյուղատնտեսական արտադրանքների այլ նմանօրինակ արտադրամասեր:

Մեր խոշորացված համայնքի հիմնական խնդիրը ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների ու զբոսաշրջային անցուղիների բարեկարգումն և հիմնանորոգումն է: Երկրորդ տեղում կարելի է առանձնացնել ժամանցի վայրերի բացակայությունը և զբոսաշրջիկներին առավել հետաքրքրող վայրերի ոչ լիարժեք հարմարեցումը, ինչն իր հերթին բացասաբար է ազդում ինչպես Հայաստանի տարբեր վայրերից, այնպես էլ աշխարհի տարբեր անկյուններից զբոսաշրջիկներ ներգրավելու գործընթացի վրա: Իհարկե, մենք քաջ գիտակցում ենք, որ նշված աշխատանքների համար երկար ժամանակ է պետք, բայց, հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը, մեղմ կլիման և զարգացման մեծ հեռանկարները, պետք է արձանագրել, որ զբոսաշրջության զարգացման ուղղությամբ արված ցանկացած՝ անգամ փոքր քայլ տալիս է դրական արդյունք: Եթե մենք

կարողանանք մեր համայնքը մատչելի և գրավիչ դարձնել զբոսաշրջիկների համար, հետզիետե կլուծենք նաև մեծ թվով աշխատատեղերի խնդիր: Այս ամենի համար առաջին հերթին անհրաժեշտ է արդիականացնել ենթակառուցվածքները:

Ստեփանավանի հնգամյա զարգացման ծրագրի մշակման, քննարկման և հաստատման գործընթացը, հիրավի, շատ ժամանակատար և ծավալուն էր, որին մասնակցություն են ունեցել բոլոր ցանկացողները, համայնքում գործող հիմնարկ-ձեռնարկությունները, համայնքապետարանի համապատասխան աշխատակիցները, համայնքի ավագանին. համոզված եմ, որ առաջարկվող ծրագիրը բխում է համայնքի և տարածաշրջանի յուրաքանչյուր բնակչի շահերից: Անցած մի քանի ամիսների ընթացքում կատարվել են բազմաբնույթ ուսումնասիրություններ միավորված գյուղական համայնքներում վերծանվել բոլոր տեսանելի և հնարավոր տարբերակները, գյուղական համայնքներում իրականացնելու լուրջ ծրագրային և ներդրումային միջոցառումներ ի նպաստ ազգաբնակչությանը: Համայնքի զարգացման ծրագիրը իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը զարգացման ծրագրի մոնիթորինգը, կազմման գործընթացը:

## 2. Ստեփանավան համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Ստեփանավան քաղաքի ընդհանուր նկարագրություն

Ստեփանավան քաղաքը մտնում է ՀՀ Լոռու մարզի տարածաշրջանային կազմի մեջ՝ գտնվելով մարզի գրեթե երկրաչափական կենտրոնում, Ձորագետի միջին հոսանքի աջ և ձախ ափերին: Ընդհանուր տարածքը 5333.6 հեկտար է, որից 1020 հա-ը կառուցապատված: Քաղաքի ընդհանուր պարագիծը 26.5 կմ է, հյուսիսից հարավ միջին լայնությունը կազմում է 6.3 կմ, իսկ արևելքից արևմուտք երկարությունը՝ 4 կմ: Մայրաքաղաք Երևանից գտնվում է 157 կմ, իսկ մարզկենտրոն Վանաձորից՝ 36 կմ հեռավորության վրա:

Ստեփանավան քաղաքի ամբողջ երկարությամբ՝ արևելքից-արևմուտք անցնում է Հայաստանը ԱՊՀ երկրների հետ կապող Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության Մ3 ավտոմայրուղին, որը համայնքի համար ունի ռազմավարական և սոցիալ-տնտեսական նշանակություն: Ստեփանավանից սկսում են 3 հանրապետական նշանակության ճանապարհներ՝ Ստեփանավան-Ալավերդի, Ստեփանավան-Պրիվոլնոյե-Ախքյորփի և Ստեփանավան-Կաթնաղբյուր:

Ստեփանավանից հյուսիս-արևելք մոտ 15կմ հեռավորության վրա է գտնվում Ստեփանավանի օդանավակայանը, որտեղ իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ և այն պատկանում է ԱԻ նախարարությանը:

Քաղաքը գտնվում է հանրապետության հյուսիսային մասի սեյսմոակտիվ գոտում, ծովի մակերևույթից 1375 մ/ 1480 մ միջին/ բարձրության վրա: Քաղաքի կլիման չափավոր խոնավ է, ձմեռը մեղմ է. չափավոր ցուրտ, ամառը ՝չափավոր տաք, համեմատաբար խոնավ: Գերակշռում են արևոտ, չափավոր խոնավ և ամպամած, անձրևոտ եղանակների տիպերը: Ամռանը միջին ջերմաստիճանը կազմում է 18 °C, իսկ առավելագույնը՝ 35°C: Ամռան ամսական տեղումների միջին քանակը հասնում է 55 մմ-ի, առավելագույնը՝ 135 մմ-ի, օդի հարաբերական խոնավություն նույնիսկ ցերեկը հազիվ է իջնում 30%-ից: Բուսականության համար խոնավության պայմանները բարենպաստ են: Համայնքում անսառնամանիք օրերի թիվը տատանվում է 150-180օր, տեղումների տարեկան միջին քանակը 687 մմ է, տեղումների մեծ մասը գրանցվում է տարվա տաք ամիսներին: Քամու միջին արագությունը՝ 1.9մ/վրկ, հարաբերական միջին տարեկան խոնավությունը՝ 73%:

## Ուրասար գյուղի ընդհանուր նկարագրություն

ՀՀ Լոռու մարզի Ուրասար գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասում, մարզկենտրոնից 26 կմ հեռավորության վրա: Գյուղը հիմնադրվել է 1805-1810թթ-ին, վարչական տարածքը կազմում է 2320 հա: Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից 1525 մ է: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամառը՝ զով, տեղումների և կարկուտի հաճախականությունը մեծ: Անձրևային տարիներին հաջորդում են նաև երաշտի տարիներ, ինչը խիստ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսության զարգացման վրա: Համայնքի տարածքով անցնում է միջհամայնքային նշանակության ավտոճանապարհի 2 կմ երկարությամբ հատվածը, որը ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում. որի պատճառով դժվարանում է բնակիչների կապը տարածաշրջանային կենտրոններից և մարզկենտրոնից: Մինչև 1950 թվականը գյուղի ազգաբնակչության 90 %-ը կազմել են ռուս ազգի բնակիչները: 1960 –ական թվականներից, երբ կառավարության որոշմամբ դրվեց գյուղի տեղահանման և գյուղի տարածքում ջրամբարի կառուցման խնդիրը, այդ ժամանակվանից էլ սկսվեց ռուս ազգաբնակչության արտագաղթը: Վաճառելով իրենց բնակարանները տեղափոխվում էին այլ բնակավայրեր, իսկ նրանց փոխարեն գյուղը համալրվում էր ադրբեջանից գաղթած հայ ազգի բնակիչներով: Գյուղի տեղահանման և ջրամբարի կառուցման կառավարության որոշումը կյանքի չկոչվեց և շարունակվեց մինչև երկրաշարժը, իսկ երկրաշարժից հետո մինչ օրս այդ մասին որևիցե տեղեկատվական կամ

օրենսդրական այլ որոշումներ չեն եղել: Մինչ երկրաշարժը համայնքի բնակչության թիվը եղել է շուրջ 750 մարդ, այդ թվում 350 մարդ եղել են ադրբեջանցիներ, որոնք ղարաբաղյան շարժման տարիներին գաղթել են Ադրբեջան, որի արդյունքում համայնքի բնակչության թիվը կեսով չափ պակասել է:

## Կաթնաղբյուր գյուղի ընդհանուր նկարագրություն

Կաթնաղբյուր գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասում, Բազումի լեռների հյուսիսային լանջին: Գյուղը 1830-ական թվականներին Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի Գյուլիերան գյուղի գաղթականների կողմից: Մինչ այդ հանդիսացել է անասնապահության համար հեռագնա արոտավայր: Գյուղի ընդհանուր տարածքը 11085.61 հա է, բարձրադիր լեռնային է ծովի մակարդակից բարձր 1650-1700մ, աչքի է ընկնում երկարատև և ցրտաշունչ ձմեռներով: Ամռանը զով է: Գյուղի տարածքով հոսում է Ձորագետ գետը: Ստեփանավան քաղաքից հեռու է 18 կմ, իսկ մարզկենտրոն՝ Վանաձորից 60կմ: Գյուղը գտնվում է մերձալպիան կլիմայական գոտում, որը հնարավորություն է տալիս հիմնականում զբաղվել անասնապահությամբ: Գյուղը հարուստ է ալպիան արոտավայրերով, աչքի է  ընկնում սառնորակ աղբյուրներով, հանքային ջրերով: Հիասքանչ անտառը, փարթամ բուսականությունը ստեղծում են բոլոր նախադրյալները այն հանգստյան գոտի դարձնելու:

*Ստեփանավան համայնքի բնակչության ժողովրդագրական տվյալներ (մարդ).*

| | | Մշտական | | | Առկա | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ընդամենը | այդ թվում | | ընդամենը | այդ թվում | |
| | | | իգական | արական | | իգական | արական |
| 1 | բնակչության թվաքանակը, մարդ | 20527 | 10133 | 10394 | 17504 | 8143 | 9361 |
| 2 | տնային տնտեսությունների թվաքանակը | 5727 | X | X | | X | X |
| 3 | այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող | 182 | X | X | | X | X |
| 4 | կիսակառույց տներում բնակվող | 218 | X | X | | X | X |
| 5 | Փախստականներ | | | | 392 | 214 | 178 |

*Սրևփանավան բնակչության բաշխվածությունն ըստ ազգային պատկանելիության (մարդ).*

| | |
|---|---|
| 1. հայ…................................................................................. | 20172 |
| 2. ռուս…............................................................................... | 82 |
| 3. եզդի…............................................................................... | 60 |
| 4. ասորի…............................................................................ | 3 |
| 5. հույն…............................................................................... | 170 |
| 6. այլ…................................................................................... | 40 |

*Սրևփանավան բնակչության բաշխումն ըստ պարիքային խմբերի (մարդ).*

| | | Արական | Իգական | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1. | մինչև 1 տարեկան.......................................................... | 216 | 208 | 424 |
| 2. | 1-2 տարեկան .................................................................. | 113 | 100 | 223 |
| 3. | 3-4 տարեկան.................................................................. | 132 | 127 | 259 |
| 4. | 5-6 տարեկան ................................................................. | 215 | 206 | 421 |
| 5. | 7-10 տարեկան ................................................................ | 261 | 252 | 513 |
| 6. | 11-14 տարեկան ............................................................... | 400 | 410 | 810 |
| 7. | 15-17 տարեկան............................................................... | 335 | 346 | 681 |
| 8. | 18-22 տարեկան............................................................... | 553 | 573 | 1126 |
| 9. | 23-45 տարեկան ............................................................. | 3610 | 3757 | 7367 |
| 10. | 46-62 տարեկան ............................................................ | 3035 | 2917 | 5952 |
| 11. | 63 և ավելի տարեկան...................................................... | 1346 | 1405 | 2751 |

*Սրևփանավան բնակչության սոցիալական խմբերի ներկայացվածությունը (մարդ).*

| | արական | իգական | Ընդամենը |
|---|---|---|---|
| 1.Հաշմանդամներ……………………………………...................… | 2020 | 1998 | 4018 |
| որից՝ | | | |
| 1.1. հաշմանդամ երեխա…………………………….................….. | 127 | 42 | 169 |
| այդ թվում՝ | | | |
| 1.1.1. 0- 5 տարեկան…………………………………....................... | 24 | 8 | 32 |

| | | | |
|---|---|---|---|
| 1.1.2. 6-15 տարեկան…………………………......................……. | 68 | 45 | 113 |
| 1.1.3. 16-18 տարեկան…………………………..................……… | 22 | 11 | 33 |
| 2. Միակողմանի ծնողազուրկ երեխա……………...................… | 245 | 134 | 379 |
| 3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխա…................. | 9 | 3 | 12 |
| 4. Միայնակ մոր երեխա………………………….......................… | 54 | 25 | 79 |
| 5. Ամուսնալուծված անձի երեխա……………….......................… | 61 | 22 | 83 |
| 6. Ոստիկանության հսկողության տակ գտնվող երեխա | 4 | | 4 |
| 6.1. այդ թվում՝ հաշմանդամներ…………....................…..……… | - | - | - |
| 7. Կենսաթոշակառու……………………………….................... | 2714 | 2824 | 5538 |
| 8. Միայնակ չաշխատող կենսաթոշակառու…….....................… | 442 | | |
| 9. Տարեց կենսաթոշակառուներ (75 տարեկան և բարձր) | 918 | 402 | 1320 |

## 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

### 2.2.1 Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն և կանխատեսում

Համայնքի 2017 բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2018-2022թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

(հազար դրամ)

| Հ/հ | | 2017թ. փաստ. | 2018թ. նախատ. | 2019 կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. | 2022թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 6 | 7 | 8 | 9 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 427091,1 | 448741,4 | 453568,9 | 457564,9 | 461668,1 | 465990,7 |
| 1 | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 70581,7 | 69462,6 | 71546,5 | 73585,8 | 75685,1 | 77955,7 |
| 1,1 | **Գույքային հարկեր անշարժ գույքից** | 23101,1 | 22903,0 | 23590,1 | 24297,8 | 25026,7 | 25777,5 |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 6621,8 | 6408,6 | 6600,9 | 6798,9 | 7002,9 | 7212,9 |
| | Հողի հարկ | 16479,3 | 16494,4 | 16989,2 | 17498,9 | 18023,9 | 18564,6 |
| 1,2 | **Գույքային հարկեր այլ գույքից** | 34723,4 | 34798,3 | 35842,2 | 36917,5 | 38025,0 | 39165,8 |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 34723,4 | 34798,3 | 35842,2 | 36917,5 | 38025,0 | 39165,8 |
| 1,3 | **Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ** | 7449,1 | 6561,3 | 6758,1 | 6960,9 | 7169,7 | 7384,8 |
| | Տեղական տուրքեր | 7449,1 | 6561,3 | 6758,1 | 6960,9 | 7169,7 | 7384,8 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1,4 | Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | 5308,0 | 5200,0 | 5356,0 | 5409,6 | 5463,7 | 5627,6 |
| | Պետական տուրքեր | 5308,0 | 5200,0 | 5356,0 | 5409,6 | 5463,7 | 5627,6 |
| 1,5 | Այլ հարկային եկամուտներ | | | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | | | | | |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | | | |
| 2 | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 298259,7 | 272595,5 | 272299,2 | 272299,2 | 272299,2 | 272299,2 |
| 2,1 | Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | |
| 2,2 | Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | |
| 2,3 | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | 298259,7 | 272595,5 | 272299,2 | 272299,2 | 272299,2 | 272299,2 |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 262276,9 | 262030,7 | 262030,7 | 262030,7 | 262030,7 | 262030,7 |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | | 296,3 | | | | |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 35982,8 | 10268,5 | 10268,5 | 10268,5 | 10268,5 | 10268,5 |
| դ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | |
| 2,4 | Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | | | |
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | | |
| 3 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 58249,7 | 106683,3 | 109723,2 | 111680,0 | 113683,8 | 115735,8 |
| 3,1 | Տոկոսներ | | | | | | |
| 3,2 | Շահաբաժիններ | | | | | | |
| 3,3 | Գույքի վարձակալությունից եկամուտներ | 12369,0 | 11833,9 | 12188,9 | 12554,5 | 12931,2 | 13319,1 |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 7128,6 | 5257,4 | 5415,1 | 5577,6 | 5744,9 | 5917,3 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | 2209,0 | 3241,1 | 3338,3 | 3438,5 | 3541,6 | 3647,9 |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 3031,4 | 3335,4 | 3435,4 | 3538,5 | 3644,6 | 3754,0 |
| 3,4 | **Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից** | 5357,1 | 5354,1 | 5354,1 | 5354,1 | 5354,1 | 5354,1 |
| | Պետության կողմից տեղական ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | 5357,1 | 5354,1 | 5354,1 | 5354,1 | 5354,1 | 5354,1 |
| 3,5 | **Վարչական գանձումներ** | 40483,6 | 58902,5 | 60669,6 | 61315,4 | 61968,9 | 62630,1 |
| | Տեղական վճարներ | 39145,7 | 57002,5 | 58712,6 | 59299,7 | 59892,7 | 60491,6 |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 1337,9 | 1900,0 | 1957,0 | 2015,7 | 2076,2 | 2138,5 |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | | | | | | |
| 3,6 | **Մուտքեր տույժերից, տուգանքներից** | 40,0 | 50,0 | 51,5 | 53,0 | 54,6 | 56,3 |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | 40,0 | 50,0 | 51,5 | 53,0 | 54,6 | 56,3 |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | | | | | |
| 3,7 | **Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | |
| 3,8 | **Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | | | | | | |
| 3,9 | **Այլ եկամուտներ** | 0,0 | 30542,8 | 31459,1 | 32402,9 | 33375,0 | 34376,2 |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | | | | | |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 0,0 | 30542,8 | 31459,1 | 32402,9 | 33375,0 | 34376,2 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 28828,7 | 32000,0 | 15000,0 | 16000,0 | 17000,0 | 18000,0 |
| 1 | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 2210,7 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 1098,6 | | | | | |
| | ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 1112,1 | | | | | |
| | ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | | | | | | |
| 2 | **ՊԱՇԱՐՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ** | | | | | | |
| 3 | **ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ** | | | | | | |
| 4 | **ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ** | 26618,0 | 32000,0 | 15000,0 | 16000,0 | 17000,0 | 18000,0 |
| | ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 26618,0 | 32000,0 | 15000,0 | 16000,0 | 17000,0 | 18000,0 |
| | ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | | | | | | |

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 2018թ.-ի համար կազմում է 478113.2 հազար դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը 38.1 % է:
- Մինչև 1988թ.-ի երկրաշարժը Ստեփանավանն ունեցել է 11 արտադրական ձեռնարկություն՝ գործվածքային, կարի արտադրական, կահույքի, թռչնաբուծական ֆաբրիկաներ, Արդկապ, ԲՀԷՍ, փորձացուցադրական պանրի արտադրության գործարաններ, ավտոտրանսպորտային ձեռնարկություն, կենցաղսպասարկման կոմբինատ, զոնալ փորձարարական կայան, տպարան: Նշված ձեռնարկությունները աղետից հետո՝ մինչև Խորհրդային միության փլուզումը, աշխատեցին մասամբ:

Այժմ համայնքի գլխավոր արտադրական ձեռնարկությունը հանքաքարի վերամշակմամբ զբաղվող «Սագամար» հանքարդյունաբերական կոմբինատն է, որը պղնձի և ցինկի խտանյութ է վերամշակում: Տարեկան մոտ 8 հազար տոննա արտադրանք է տալիս, նախատեսված է 400 աշխատողի համար: Այս պահին կոմբինատը դադարեցրել է գործունեությունը, սակայն 2018 թ.-ին նախատեսվում է շարունակել աշխատանքները:

Համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները.

| Հ/Հ | Անվանացանկ | Քանակը | Կազմակերպությունների անվանումը |
|---|---|---|---|
| 1 | Գործարաններ | 0 | - |
| 2 | Ֆաբրիկաներ | 1 | Հանքարդյունաբերական «Սագամար» ՓԲԸ |
| 3 | Սահմանափակ պատասխանատու ընկերություններ | 65 | Լիմոնադի, քարի, փայտի մշակման, կահույքի, հացամթերքների արտադրություն, գյուղատնտ., առևտրի և այլն |
| 4 | ՓԲ, ԲԲ, ՊՓԲ ընկերություններ | 12 | ԲՀԷՍ, Արդկապ /սարքաշինական/, պանրի-նախկին գործարանների բազայի վրա գործող ընկերություններ և այլն |
| 5 | Անհատ ձեռներեցներ | 191 | Առևտրի, սպասարկման կետեր, հասարակական սնունդ |
| 7 | Շինարարական կազմակերպություններ | 4 | «Վարդան» ՍՊԸ<br>«ՄՍ շինարարներ»,<br><br>«Տիտոն» ՍՊԸ<br>«Լիմհերթ» ՍՊԸ |

## *Քաղաքաշինություն և ճարտարապետություն*

Համայնքի քաղաքաշինական գործունեության հիմնական ուղղվածությունը բնակչության կենսագործունեության համար բարենպաստ տարածական միջավայրի ստեղծումն է, տարածքի կայուն զարգացումն է, արտադրական և սպասարկման ենթակառուցվածքների կազմակերպումը, ծրագրումը, շենք շինությունների նախագծումը, վերակառուցումը և շինարարությունը, գոյություն ունեցող կառույցների և դրանց ընդհանուր օգտագործման տարծքների պահպանությունը: Նշված քաղաքաշինական գործունեության հիմնադրույթների պահանջներին համապատասխան քաղաքաշինության ոլորտում առաջիկա 5 տարիների ընթացքում համայնքի ռազմավարական պլանավորումը և ծրագրավորումը ուղղված է բազմաբնակարան շենքերի և համայնքային ենթակառուցվածքների պահպանմանը:

- համայնքի վարչական տարածքը 5333.6 հա է, այդ թվում՝
- բնակավայրերի տարածք – 630 հա,
- արդյունաբերական նշանակության հողեր – 196 հա,
- գյուղատնտեսական նշանակության հողեր – 3445 հա,
- հատուկ պահպանվող տարածքներ – 146 հա,
- ջրային ֆոնդեր – 444 հա,
- էներգետիկայի և տրանսպորտի – 48 հա:

Ստեփանավան համայնքի առաջին հատակագիծը կազմվել է 1957թ.-ին, իսկ վերջին գլխավոր հատակագիծը 1988թ.- երկրաշարժից հետո մշակվել է «Հայնախագիծ» ինստիտուտի քաղաքաշինության արվեստանոցի կողմից և հաստատվել 2005թ.-ին: Համայնքի կենտրոնական հրապարակը, հանրապետության եզակի ճարտարապետական յուրահատուկ համալիրներից է, որը իր մեջ ընդգրկում է Ս. Շահումյանի անվան տուն-թանգարանը, 3 հուշարձան կոթողներ, մշակույթի պալատը, շատրվաններ ու ձևավոր կանաչապատ տարածքներ և սալապատ անցուղիներ, դառնալով ստեփանավանցիների և հյուրերի հանգստի և ժամանցի սիրված վայր: Վերջին մի քանի տարիների ընթացքում համայնքի կողմից իրականացվել են լայնածավալ բարեկարգման աշխատանքներ, միտված քաղաքի արտաքին տեսքին, ճարտարապետական կոթողների պահպանմանը և նոր կանաչապատ ընդհանուր օգտագործման տարածքների ստեղծմանը:

Առաջիկա 5 տարիների ընթացքում համայնքը նախատեսում է փոխել 60 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակությունը, որից 30 հա դարձնել բնակավայրերի սպասարկման ոլորտի օբեկտների և բնակելի տների կառուցման

նշանակության հողեր, իսկ 30 հա-ը հատուկ պահպանվող տարածքների հողերի նպատակային նշանակության՝ հանգստի գոտիներ կառուցելու նպատակով:

*Հիմնախնդիրներ՝*

- *համայնքի գլխավոր հատակագծի դրույթների խախտումներ.*
- *համայնքի փողոցային ցանցի անբարեկարգ իրավիճակ.*
- *արտադրական տարածքների ոչ նպատակային օգտագործում.*
- *համալիր ավտոտնակների և ավտոկայանատեղիների բացակայություն.*
- *սպասարկման օբյեկտների ոչ համաչափ տեղաբաշխում.*
- *զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայություն:*

Համայնքում ներդրողներին շահագրգռելու, տարածաշրջանը ներդրումների համար առավել գրավիչ դարձնելու և հնարավոր ֆինանսական միջոցներ ներգրավելու համար խոշորացված համայնքի ողջ տարածքում իրականացվում են չօգտագործվող հողատարածքների, անավարտ և չօգտագործվող շինությունների և օբյեկտների հաշվառում-գույքագրում անկախ սեփականության ձևից:

## *Բնակարանային ֆոնդ*

Համայնքի բազմաբնակարան շենքերի թիվը՝ 146, բնակարանների թիվը՝ 1666

Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը՝ 117 հազ. 259քմ, բնակելի մակերեսը՝ 68 հազ. 865քմ, այդ թվում 20 հազ. 832քմ-ը՝ համայնքային սեփականություն, իսկ 96 հազ. 427քմ-ը՝ մասնավոր (սեփականաշնորհված)

Բազմաբնակարան վթարային բնակելի շենքերի թիվը՝ 38, որոնցում բնակարանների թիվը՝ 334

Կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի թիվը՝ 5

Առանձնատների թիվը՝ 3903

Վթարային առանձնատների թիվը՝ 356

Կիսակառույց առանձնատների թիվը՝ 214

Բնակարանի կարիքավորների թիվը՝ 374 ընտանիք

Ավտոտնակների թիվը՝ 374

Բազմաբնակարան ֆոնդի կառավարումը և սպասարկումը իրականացվում է սեփականատերերի և համայնքի ուժերով, որոնց համար չկան անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, չկան կազմավորված համատիրություններ: 2 բազմաբնակարան շենքեր ունեն հարթ տանիքների հիմնանորոգման, թվով 75 շենքեր ունեն առաջնահերթ տանիքների, ընդհանուր օգտագործման տարածքների և ինժեներական ցանցերի առաջնահերթ վերանորոգման կարիք:

Աղետալի վիճակում է համայնքի երկրաշարժից հետո կառուցապատված Աշտարբերդ թաղամասը, որի երկհարկանի փայտաշեն բազմաբնակարան շենքերը (24 շենք՝ 269 բնակարանով) բնակության համար դարձել են ոչ անվտանգ: Բազմաբնակարան շենքերի բակային տարածքները ունեն վերանորոգման և խաղահրապարակների կառուցման անհրաժեշտություն:

*Հիմնախնդիրներ՝*

- *բազմաբնակարան շենքերի պանիքների, ընդհանուր օգտագործման տարածքների և ինժեներական ցանցերի անմխիթար վիճակ.*
- *հիմնանորգման և վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն.*
- *բակային տարածքների անբարեկարգ վիճակ.*
- *խաղահրապարակների բացակայություն.*
- *համատիրությունների և կառավարման համակարգի բացակայություն.*
- *շենքերում փակ դռների առկայություն:*

## *Աղբահանություն և սանիտարական մաքրում*

Ստեփանավան համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները իրականացվում են ավագանու կողմից հաստատված սխմայի համաձայն, մրցույթում շահած օպերատորի կողմից: 2018 թվականից աղբահանության աշխատանքներ են իրականացվում նաև գյուղական համայնքներում: Աղբահանության աշխատանքներում ներգրաված են 18 բանվոր-ծառայողներ, 5 աղբատար հատուկ ամտոմեքենաներ, 2 ջրցան և 2 ձյուն մաքրող տեխնիկաներ:

Համայնքը «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում կազմել և իրականացնում է միջոցառումների ընդլայնված ծրագրային դրույթներ տարեկան և հնգամյա ծրագրերում ընգրկելու նպատակով: Համայնքի տարածքում ավլվում է 51000 քմ բարեկարգ տարածք, որի ծավալները յուրաքանչյուր տարի ավելանում են համայնքում բարեկարգման աշխատանքներ իրականացնելուն զուգընթաց:

## *Ճանապարհային տնտեսություն և տրանսպորտ*

Ներհամայնքային ճանապարհների պահպանումը ու վերանորոգումը համայնքի կարևորագույն հիմնախնդիրներից է, որի համար յուրաքանչյուր տարի համայնքային և պետական բյուջեների ֆինանսավորմամբ իրականացվում են ներդրումներ ուղղված ճանապարհային տնտեսության պահպանմանը: 2018 թվականին աշխատանքային պլանով նախատեսվում է համայնքային բյուջեի միջոցներով իրականացնել շուրջ 40 մլն դրամ ներդրում խոշորացված համայնքի ճանապարհների և փողոցների վերանորոգման համար: Պետական ֆինանսավորմամբ և համայնքապետարանի ներդրումային մասնակցությամբ 2018 թվականին ամբողջովին կհիմնանորոգվեն Սոս Սարգսյան-

Միլիոնի և Գ.Նժդեհ փողոցները ընդհանուր 30 մլն դրամ նախահաշվային արժեքով: Խոշորացված համայնքը ունի 76.4 կմ երկարությամբ փողոցային ցանց և 16.8 կմ երկարությամբ մոտեցման ճանապարհներ, որոնցից 60.8 կմ-ը բարեկարգված է (ունի որևիցէ տեսակի ծածկույթ), իսկ մնացած 332 կմ-ը բնահողային է: համայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգման աշխատանքները գերակա խնդիր են համայնքի համար, որոնց առկայությունը խթան կհանդիսանա համայնքում զբոսաշրջության զարգացմանը:

## *Համայնքների կապը մայրուղիների հետ*

Համայնքը ունի 18 կմ միջհամայնքային և 5 կմ միջպետական մայրուղի: Համայնք-կենտրոն տրանսպորտային առկայությունը հետևյալն է՝

Կաթնաղբյուր-Ուրասար-Արմանիս-Ստեփանավան երթուղում աշխատում են 2 ավտոբուսներ, օրեկան 1 անգամ:

Ստեփանավան-Վանաձոր երթուղում աշխատում են 3 ավտոբուսներ, մեկ գազել օրեկան 4 անգամ:

Ստեփանավան-Երևան երթուղում աշխատում են 5 միկրոավտոբուսներ օրեկան 5 անգամ:

## *Ջրամատակարարում և ջրահեռացում*

Համայնքի ջրամատակարարումը իրականացվում է 3 հիմնական աղբյուրներից համայնքի տարածքում տեղաբաշխված ՕԿՋ-ների միջոցով: Ջրամատակարարման քաղաքային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 68 կմ, որից անցած 4 տարիների ընթացքում «Ասիական զարգացման բանկի» և «Համաշխարհային» բանկի ներդրումային ծրագրերով իրականացվել է Ստեփանավան քաղաքի ջրամատակարարման բարելավմանն ուղղված 3 ծրագրեր: Քաղաքը ունի 60% -ից ավելի շուրջօրյա ջրամատակարարում, որը իրականացվել է հիմնականում գոտիավորման և բախշիչ ցանցի կորուստների վերացման արդյունքում, իսկ մնացած ժամային գրաֆիկով մատակարարվող թաղամասերում իրականացվելու են բարելավման և ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ, որի արդյունքում քաղաքը կունենա շուրջօրյա ջրամատակարարման հնարավորություն:

Կաթնաղբյուր գյուղը չունի ջրամատակարարման միասնական ցանց, գործող ջրագծերը հին են, ունեն հիմնանորոգման առաջնահերթ կարիք: Ջրամատակարարումը իրականացվում է գյուղամերձ սարերում գտնվող ակունքներից, որտեղ չկան կապտաժային կառուցապատված համակարգեր, չեն

իրականացվում մատակարարվող ջրի մանրէաբանական հետազոտություններ: Գյուղը չունի ջրահեռացման համակարգ:
Ուրասար գյուղի խմելու ջրի ներքին և արտաքին ցանցերը գտնվում են անմխիթար վիճակում, չկան կապտաժային պահպանված համակարգեր, ջրի որակը չի հետազոտվում: Գյուղը չունի ջրահեռացման ներքին ցանց:

*Հիմնախնդիրներ՝*

- *ջրային կառույցների քայքայված և մաշված վիճակ*
- *ջրավազաններից ջրի մեծ չափերի կորուստ.*
- *անսարք ջրային կառույցների առկայություն.*

Շինարարության բնագավառում զարգացման տենդենցը տանում է դեպի ֆիզիկական անձանց կողմից կառուցվող սպասարկման ոլորտի համար նախատեսված տարբեր օբյեկտների կառուցմանը: Այս ասպարեզում քաղաքի առաջընթացը զգալի է, նախկին վագոն-տնակներում տեղադրված օբյեկտները հիմնականում փոխարինվել են քարե կառույցներով:

Համայնքում արտադրվող ապրանքները հիմնականում սպառվում են հանրապետության տարածքում:

Համայնքում գործող պարենային և ոչ պարենային ապրանքներ արտադրող տաս և ավելի աշխատողներ ունեցող կազմակերպությունների ցանկը.

| N | Կազմակերպության անվանումը | Կազմակերպության գործունեության տեսակը | Կազմակերպության հասցեն |
|---|---|---|---|
| 1 | «ԲՀԷՍ Պլազմա» ՍՊԸ | Շինանյութ | Բաղրամյան 124 |
| 2 | «ԲախշիՊլազմա» ՍՊԸ | Էլեկտրական սարքեր | Վիրահայոց մայրուղի |
| 3 | Ա/Ձ Վանիկ Չերքեզյան | Հացամթերք | 4-րդ մ/շ 3/15 |
| 4 | Ստեփ Անուշ ՍՊԸ | Հացամթերք | Կամո 62 |
| 5 | «Ալպյան»ՍՊԸ | Կաթնամթերք կաթի փոշի | Արևելյան 6 |
| 6 | «Քարախաչ»ՍՊԸ | մսամթերք կաթնամթերք | Ծագարդա |

Առաջիկա 5 տարիների ընթացքում համայնքը նախատեսում է փոխել 60 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակությունը, որից 30 հա դարձնել բնակավայրերի սպասարկման ոլորտի օբեկտների և բնակելի տների կառուցման

նշանակության հողեր, իսկ 30 հա-ը հատուկ պահպանվող տարածքների հողերի նպատակային նշանակության՝ հանգստի գոտիներ կառուցելու նպատակով:

### *Գյուղատնտեսություն*

Համայնքի բնակչության շուրջ 20%-ը զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահություն, դաշտավարություն, այգեգործություն, մեղվաբուծություն: Ստեփանավան համայնքը ունի ընդամենը 18112 հա գյուղատնտեսական նշանակության հող, որից վարելահող 1340 հա, խոտհարք 3179 հա, արոտ 11920 հա այլ հողատեսք 1672 հա: Գյուղատնտեսական նշանակության հողերից մշակվում է ընդամենը 241 հա վարելահող: Այդ հողերը 108 հեկտարի վրա ցանվում են հացահատիկային մշակաբույսեր, որոնց միջին բերքատվությունը կազմում է 25-35 ցենտներ, կարտոֆիլ 55 հա – 200 ցենտներ, բանջարանոցային մշակաբույսեր 58 հա – 100ցենտներ, հատիկաընդեղեն մշակաբուսեր 15 հա – 18 ցենտներ և կերի արմատապտուղ 5 հա – 200ցենտներ: Խոշոր եղջյուրավոր անասունների թիվը կազմում է 3885 գլուխ, որց կովեր 2013 գլուխ, երինջներ 1244 գլուխ, հորթեր 628 գլուխ, խոզեր 940 գլուխ, ոչխարներ 847 գլուխ, ձիեր 83 գլուխ, ճագարներ 256 գլուխ, թռչուններ 5358 հատ, մեղվաընտանիքների թիվը 1132 հատ: Կաթի մթերատվությունը գինը շատ ցածր է, որը կազմում է 100-120 դրամ: Համայնքում կա 42 հա ոռոգելի գյուղտնտեսական նշանակության հող, որոնք փաստացի չեն ոռոգվում: Դաշտամիջյան ճանապարհների վիճակը անբավարար է: Համայնքում արտադրվող ապրանքները հիմնականում սպառվում են հանրապետության տարածքում: Ստեփանավան համայնքը ունի 250 անուն գյուղատնտեսական տեխնիկա, որից տրակտորներ՝ 94, բեռնատար մեքենաներ՝ 23, կցասայլեր՝ 36 և գյուղատնտեսական գործիքներ՝ 97 միավոր:

ՀՀ կառավարության կողմից համայնքի փոքր և միջին տնտեսություններին ցուցաբերվում է շարունակական աջակցություն, ցածր գներով տրամադրվում են դիզելային վառելանյութ, պարարտանյութեր և սերմացուներ: 2018 թվականին ևս անհատ, փոքր և միջին տնտեսություններին կտրամադրվի 5 տոննա պարարտանյութ և 10 տոննա դիզվառելիք:

## *Համայնքի պատմամշակութային ժառանգություն*

- Ստեփանավան համայնքը հանրապետության գողտրիկ քաղաքներից մեկն է, որը հայտնի է իր գեղեցիկ բնությամբ, մաքուր օդով, բնական, պատմական և մշակութային հուշարձաններով: Ստեփանավան համայնքի և մոտակա պատմամշակութային հուշարձաններն են՝
- «Լոռի» բերդ-ամրոց, գտնվում է քաղաքից 5 կմ հեռավորության վրա, Լոռի բերդ գյուղի մոտակայքում, Միսխանա և Ձորագետ կիրճերի հատման մասում - պահպանված է իր բնական տեսքով և ներառված է ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կազմում:
- Սուրբ Սարգիս եկեղեցի, 19-րդ դար, գտնվում է քաղաքի մեջ –գտնվում է բարեկարգ վիճակում, 2016թ.-ին նաև կատարվել է որոշակի վերանորոգման աշխատանքներ:
- Ստեփան Շահումյանի տուն-թանգարան, գտնվում է կենտրոնական հրապարակում- նախատեսվում է բարեկարգման աշխատանքներ:
- Սահակ Սակյանի անվան թանգարան, գտնվում է կենտրոնական հրապարակում- գտնվում է բարեկարգ վիճակում:
- Մայրոի ձոր-քարանձավ, 20-րդ դարասկզբի հեղափոխական իրադարձությունների մասին վկայող խորհրդավոր մի վայր, որտեղ Ստեփան Շահումյանը 1899 թվականին իր համախոհների հետ անց է կացրել անլեգալ հանդիպումներ- համայնքի կողմից կատարվում են մաքրման և պահպանման աշխատանքներ:
- Դենդրոպարկ, հիմնադրել է Էդմոն Լեոնովիչը 1931 թվականին: Գտնվում է Ստեփանավանից 12 կմ հեռավորության վրա: Սա Հայաստանի բնության ամենաուշագրավ հատվածներից մեկն է- մշտապես գտնվում է համայնքի ուշադրության կենտրոնում:
- Հնեվանք վանական համալիր, 10-14-րդ դդ., գտնվում է Ձորագետի աջ ափին, Կուրթան գյուղից արևելք - գտնվում է բարեկարգ վիճակում, վերանորոգման աշխատանքները կատարվել են 2007-2008 թվականներին:
- Սբ. Նշան մատուռ, կառուցված 1871 թվականին, գտնվում է քաղաքից 2 կմ հեռավորության վրա, Արմանիս տանող ճանապարհին - համայնքի կողմից կատարվում են մաքրման և պահպանման աշխատանքներ:
- Սբ. Նիկոլայ Հրաշագործ եկեղեցի, կառուցված 1910-1914 թթ, ռուսական եկեղեցի, գտնվում է Ամրակից գյուղում, Ստեփանավանից 3 կմ հեռավորության վրա – գտնվում է բարեկարգ վիճակում:

- Դորբանդավանքի Սուրբ Աստվածածին եկեղեցին, գտնվում է Սվերդլով գյուղից 3 կմ դեպի հյուսիս-արևելք - վերականգվել է 1980թ.-ին և այժմ գտնվում է բարեկարգ վիճակում:
- Եռախաչ մահարձան, գտնվում է Կողես գյուղում,քանդակել է տվել Զաքարյանների տոհմից սերված Տուտիկ իշխանը, իր 3 որդիների հիշատակին,որոնք մոնղոլական հրոսակների դեմ կռվել են և սպանվել 1241 թվականին – գտնվում է բարեկարգ վիճակում:
- Սոս Սարգսյանի արձան, գտնվում է քաղաքային զբոսայգում- գտնվում է բարեկարգ վիճակում:
- Ստեփան Շահումյանի արձան, գտնվում է հրապարակի սկզբնային մասում- գտնվում է բարեկարգ վիճակում:
- Տորմակավանք, 5-6-րդ դդ., գտնվում է Գյուլագարակ գյուղում- պահպանված է միայն վանքի ավերակները:
- Ամենափրկիչ մատուռ, 13-րդ դար,գտնվում է Ստեփանավան-Տաշիր ավտոճանապարհին- գտնվում է բարեկարգ վիճակում, վերականգնվել է 2011թ.-ին:
- Միջնադարյան կամուրջ Միսխանա գետի վրա, գտնվում է Լոռի բերդ ամրոցի տարածքում- գտնվում է բարեկարգ վիճակում:
- Խաչպար արձան, գտնվում է Դեսինի պուրակում- գտնվում է բարեկարգ վիճակում:
- Գյուղական համայնքներում պատմամշակութային պահպանվող հուշարձաններից միայն Ուրասար գյուղում առկա է եկեղեցի, որը ունի հիմնանորոգման կարիք:

## *Համայնքի դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ, բուհեր.*

Համայնքում գործում են 9 հանրակրթական դպրոցներ, որտեղ ընդհանուր հաշվով սովորում են 1929 դպրոցական: Հանրակրթական դպրոցները, բացի վարժարանից, քարաշեն են: Շենքերի վիճակը ընդհանուր առմամբ գնահատվում են բավարար, բացի գյուղական համայնքների դպրոցներից, որոնք ունեն հիմնանորոգման կամ մասնակի վերանորոգման կարիք: Քաղաքի դպրոցները, բացի թիվ 6 դպրոցից ունեն տարբեր խնդիրներ կապված շենքային պայմանների բարելավման (կոսմետիկ վերանորոգում, ջրագծերի, կոյուղագծերի փոխում, ջեռուցման համակարգի ձևափոխում, խոհանոցի հիմնանորոգում, դասասենյակների լուսամուտների հիմնավերանորոգում, մարազահրապարակների ձևավորում…) և նոր գույքի ձեռքբերման հետ (աշակերտական սեղան-աթոռների փոխում, համակարգչային դասարանների և գրադարանի վերակառուցում՝ համաձայն նոր պահանջների, լաբորատորիաների կահավորում…): Քաղաքի թիվ

1 դպրոցն ունի նաև մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի կառուցման և կահավորման անհրաժեշտություն: Թիվ 1 վարժարանը գործում է հարմարեցված տնակային պայմաններում:

### *Կրթություն*

Վերջին տարիներին կրթական բարեփոխումները իրենց անդրադարձն են ունենում նախադպրոցական կրթության և դաստիարակության բնագավառում: Ինչպես պետությունը անյպես էլ տեղական ինքնակառավարման մարմինները ավելի են կարևորում նախադպրոցական կրթության դերն ու նշանակությունը:

Ակնհայտ է, որ երեխայի զարգացման և կրթության խնդիրները կարող են լուծվել միայն նախադպրոցական ուսումնական հաստատության նպատակային կառավարման և վերհսկման դեպքում: Այսօր նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության բարեփոխումը պահանջում է այդ աշխատանքի նկատմամբ կիրառել սոցիալհոգեբանական և գիտական կառավարման մոտեցում: Հիմնական խնդիրն է՝ բարելավել ընտանիքի և հասարակության պահանջը երեխայի ներդաշնակ զարգցման գործում, դպրոց ուղարկել ֆիզիկապես առողջ, անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով օժտված երեխաներ:

Այս նպատակային ուղղվածությամբ են այսօր աշխատում համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող 5 նախադպրոցական ուսումնական հաստատությունները, որոնցում ընդգրկված են 416 երեխաներ, ամսվա միջին հաճախելիությունը կազմում է 370-390 երեխա, նրանց հետ աշխատում են 74 աշխատակիցներ, նրանցից 34-ը մանկավարժներ են: Գործում են տարիքային 16 խմբեր, որոնք աշխատում են պետական համալիր ծրագրով՝ հաշվի առնելով երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Նախադպրոցական կրթությունն ու դաստիարակությունը համայնքի գրեթե բոլոր մանկապարտեզներում կայուն հիմքերի վրա են դրված: Նրանցում նախակրթությունն իրականացվում է ժամանակակից մեթոդական ուղեցույցներով, ծրագրերով և նախադպրոցական կրթության մասին օրենքի պահանջներով:

Համայնքում խնդիրներ կային 0-6 տարեկան երեխաների կրթության գործը կազմակերպելու ուղղությամբ, սակայն նորակառույց նախադպրոցական ուսումնական հաստատությունը, որը ազգային ժողովի պատգամավոր Կարեն Կարապետյանի նվերն է մեր համայնքին, վերջնականապես լուծեց այդ հարցը՝ իր տանիքի տակ առնելով 100 երեխայի:

Տարվա ընթացքում ակտիվ է անցել համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների մասնակցությունը՝ մարզային, հանրապետական, միջազգային միջոցառումներին, մրցույթ

փառատոներին (Ա. Մարգարյանի անվան մշակույթի պալատ, արվեստի դպրոց, մանկապատանեկան մարզադպրոց, կենտրոնական գրադարան):

Արվեստի դպրոց ՀՈԱԿ է հաճախում 324 սան, որոնց հետ աշխատում են 32 մանկավարժ: 2017 թվականին սաներից՝ 8 հոգին մասնակցել են «Վերածնունդ» միջազգային IX փառատոնին, «Իզաբել» հանրապետական XII փառատոնին, «Արտ Մյուզիք» VIII մրցույթ-փառատոնին և արժանացել են I կարգի դափնեկիր-2 հոգի, II կարգի դափնեկիր-2 հոգի, IV կարգի դափնեկիր-2 հոգի, V կարգի դափնեկիր-2 հոգի: Մասնակցել են Ֆրանսիայի Դեսին քաղաքում կայացած «Կոմիքսներ» փառատոնին- արժանացել են պատվավոր մրցանակի: Մասնակցել են համահայկական նկարչական մանկապատանեկան VI մրցույթ փառատոնին- արժանացել են պատվոգրի: Մասնակցել են «Պետական աջակցության մշակութային միջոցառումներ»-ի ծրագրի շրջանակներում պատանի երաժիշտ կատարողների Լոռու մարզային մրցույթ-փառատոնին-6 աշակերտ արժանացել են շնորհակալագրերի՝ գերազանց և լավագույն մասնակցության համար:

Ա. Մարգարյան անվան մշակույթի պալատ ՀՈԱԿ է հաճախում 245 աշակերտ, որտեղ գործում է 14 խումբ: Կերպարվեստի խմբի սաները մասնակցել են «Ազգային տոներ, ծեսեր, խաղեր» խորագիրը կրող համահայկական մանկապատանեկան նկարչական 7-րդ մրցույթ-փառատոնին՝ արժանացել են խրախուսական մրցանակի,վոկալ խմբի սաները մասնակցել են «Նոր մեղեդի» մանկապատենական երաժշտական մրցույթ-փառատոնին և արժանացել են 1 պատվավոր դիպլոմի, 1 մասնակից զբաղեցրել է 3-րդ տեղ: Մասնակցել են «Նոր ձեռքեր» դեկորատիվ կիրառական արվեստի 9-րդ մրցույթ-փառատոնին և արժանացել են 2-րդ կարգի մրցանակի- 4 հոգի,3-րդ կարգի մրցանակի - 3 հոգի, 4-րդ կարգի մրցանակի -1 հոգի: Պարային խումբը մասնակցել է «Պարատուն» պարային փառատոնին, Գյումրիում պարի միջազգային օրվան նվիրված միջոցառմանը, որտեղ արժանացել են շնորհակալագրի, ինչպես նաև մասնակցել են «Պետական աջակցության մշակութային միջոցառումներ»-ի ծրագրի շրջանակներում Ազգային նվագարանների, երգի, պարի և ասմունքի Լոռու մարզային փառատոնի են «Պար» անվանակարգում արժանացել են պատվոգրի՝ գերազանց մասնակցության համար, նույն ծրագրի շրջանակներում ժող. նվագարաններ անվանակարգում արժանացել են պատվոգրի՝ գերազանց մասնակցության համար, երգեցողություն անվանակարգում արժանացել են պատվոգրի՝ գերազանց մասնակցության համար (1 հոգի), «Երգ» անվանակարգում արժանացել են պատվոգրի՝ լավագույն մասնակցության համար (1 հոգի): Ասմունքի սաները մասնակցել են «Լիրիկա» ասմունքի հանրապետական մրցույթ փառատոնին, որտեղ 1-ին հորիզոնականը զբաղեցրել են- 2 հոգի, 2-րդ հորիզոնականը-1 հոգի և 3-րդ հորիզոնականը- 3 հոգի:

«Մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ են հաճախում 218 երեխա, որտեղ գործում է 5 մարզաձև (ազատ և հունահռոմեական ըմբշամարտ, ակրոբատիկա, շախմատ, ֆուտբոլ), գործում է 15

խումբ: Մասնակցել են 37 մրցումների,որից 11-ը միջազգային կարգի, 31-ը ընկերական և ստուգողական հանդիպումներ: 28 սան զբաղեցրել են 1-ին տեղ, 31 սան 2-րդ տեղ տեղ, 33 սան 2-րդ տեղ: Միջպետական մրցույթների մասնակցել են 16 սան, որից՝ 4-ը 1-ին տեղ, 7-ը 2-րդ տեղ, 5-ը 3-րդ տեղ :

| | | Հաստատությունների թիվը | Դասընթացում զբաղվածների թիվը, մարդ | Աշակերտների թիվը, մարդ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | առկա | նախատեսված |
| 1 | Նախադպրոցական ուսումնական հաստատություն | 5 | 74 | 308 | 295 |
| 2 | Նախակրթարան | 4 | | 86 | |
| | | | | առկա | նախատեսված |
| 3 | Թիվ 1 հիմնական դպրոց | 1 | 59 | 378 | 422 |
| 4 | Թիվ 2 հիմնական դպրոց | 1 | 48 | 380 | 520 |
| 5 | Թիվ 6 միջնակարգ դպրոց | 1 | 66 | 475 | 240 Երկու հերթափոխ |
| | Թիվ 3 հիմնական դպրոց | 1 | 44 | 216 | 408 |
| | Ավագ դպրոց | 1 | 49 | 235 | 601 |
| 6 | Արմանիսի հիմնական դպրոց | 1 | 18 | 27 | 200 |
| 7 | Քոլեջ/ վարժարան | 3 | 94 | 262 | 480 |
| 8 | ԲՈւՀ | 1 | 27 | 180 | 45 |
| 9 | Արվեստի դպրոց | 1 | 35 | 326 | |
| 10 | Մշակույթի պալատ | 1 | 15 | 247 | |
| 11 | Մարզադպրոց | 1 | 16 | 217 | |
| 12 | Ուրասարի հիմնական դպրոց | 1 | 13 | 43 | |
| 13 | Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոց | 1 | 17 | 107 | |

## *Առողջապահություն*

Համայնքում գործում է 1 բժշկական կենտրոն, 1 պոլիկլինիկա: Առողջապահության ոլորտում լուրջ խնդիր կա՝ կապված բուժաշխատողների վերապատրաստման և համակարգը նոր, երիտասարդ կադրերով համալրելու հետ: Բուժսպասարկման նյութատեխնիկական բազան ևս նոր ժամանակակից բուժսարքավորումներով համալրման կարիք ունի:

Ստեփանավանում գործում է նաև ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության Լոռու մարզային կենտրոնի Ստեփանավանի ներմարզային կայանը, որը հետևում է քաղաքի սանիտարական վիճակին, վերահսկում վարակիչ, ինֆեկցիոն հիվանդությունները, փորձում կանխարգելել համաճարակների տարածումը քաղաքում և այլն: Հակահամաճարակային կենտրոնը գործում է քարե հին շենքում, որն ունի հիմնանորգման անհրաժեշտություն: Լաբորատորիաների և նյութատեխնիկական բազայի վիճակը բավարար է:

| Անվանումը | Հաստատությունների թիվը | Դրանցից քանի՞սն են գործում | Դրանցում զբաղվածների թիվը, մարդ | Ըստ նախագծի մահճա-կալների թիվը |
|---|---|---|---|---|
| 1. <<Ստեփանավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ | 1 | 1 | 91 | 50 |
| 2. Պոլիկլինիկա | 1 | 1 | 94 | X |
| 3. Պետական հիգիենիկ համաճարակային տեսչության կայան | 1 | 1 | 13 | X |
| 4. Ստոմատոլոգիական բժշկական օգնություն իրականացնող հաստատություն | 7 | 7 | 35 | X |
| 5. Դեղատուն | 9 | 9 | 27 | X |
| 6. Ուրասարի բուժ կետ | 1 | 1 | 1 | X |
| 7. Կաթնաղբյուրի բուժ կետ | 1 | 1 | 1 | |

- ***Ընտանեկան նպաստի համակարգում գրանցված ընտանիքներ.***

| | | |
|---|---|---|
| 1 | Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը | 3700 |
| 2 | Ընտանեկան նպաստի համակարգում փաստագրված տնային տնտեսությունների թվաքանակը | 3900 |

- ***Զբաղվածության և գործազրկության մակարդակները***

**Համայնքում զբաղվածների բաշխվածությունն ըստ ոլորտների (մարդ)՝**

| | | |
|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն | 47 |
| 2. | Ձկնորսություն, ձկնաբուծություն | - |

| | | |
|---|---|---|
| 3. | Հանքագործական արդյունաբերություն | 431 |
| 4. | Մշակող արդյունաբերություն, այդ թվում գյուղատնտեսական հումք մշակող | 54 |
| 5. | Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում | 162 |
| 6. | Շինարարություն | 23 |
| 7. | Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում | 753 |
| 8. | Գյուղատնտեսական ծառայություններ | 27 |
| 9. | Հյուրանոցներ և ռեստորաններ | 44 |
| 10. | Տրանսպորտ և կապ | 81 |
| 11. | Տեղական ինքնակառավարում | 57 |
| 12. | Կրթություն, այդ թվում նախադպրոցական | 361 |
| 13. | Առողջապահություն | 247 |
| 14. | Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում | 43 |
| 15. | ՀՈԱԿ | 138 |

**Գործազրկության մակարդակը**

| | | ընդհանուր | արական | իգական |
|---|---|---|---|---|
| 1 | Ընդամենը գրանցված գործազուրկներ, որից՝ | 2043 | 491 | 1552 |
| 2 | միջնակարգ կրթությամբ | 1156 | 298 | 858 |
| 3 | միջին մասնագիտական կրթությամբ | 765 | 152 | 613 |
| 4 | բարձրագույն կրթությամբ | 122 | 41 | 81 |

## 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

**Համայնքի** վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվում են հանրապետական և մարզային ծրագրեր և միջոցառումներ կապված

փողոցների բարեկարգման, «Աշոտաբերդ» թաղամասի հիմնախնդրի, համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների և շքամուտքերի հիմնանորոգման, համայնքի մանկական այգու հիմնանորոգման, բազմաբնակարան շենքերի բակերում պարզ տիպի խաղահրապարակների կառուցման հետ:

Միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում շարունակվող ծրագրերից է համայնքի փողոցների գիշերային լուսավորության ցանցի ընդլայնումը՝ հին լուսատուների փոխումը նոր էներգախնայողական տեսակով, ավտոմատ կառավարման համակարգի ներդրումը: «Վորլդ Վիժն Հայաստան» զարգացման և բարեգործական միջազգային կազմակերպությունը համայնքի երիտասարդների մասնակցությամբ շարունակելու է համայնքային ծառայության ուսումնական ծրագիրը: 2017 թվականից համայնքապետարանը մասնակցության հայտ է ներկայացրել և անցել ծրագրի առաջարկի 2-րդ փուլ, որով խոշորացված համայնքը սոց ներդրումների և տարածքային կառավարման հիմնադրամի ծրագրային ավելի քան 200 մլն դրամ արժողությամբ մրցույթին ներկայացրել է բարեկարգման, աղբահանության, ինչպես նաև արտադրական հոսքագծի տեխնիկական միջոցների ձեռքբերման և բիզնես ծրագրով համայնքի բյուջե եկամուտներ ներգրավման նպատակով: Ծրագրի իրականացման հեռահար տեսլականը համայնքը ավելի մաքուր, բարեկարգ, զբոսաշրջության համար գրավիչ և հարմարավետ դարձնելն է: 2018 թվականին համայնքապետարանի ծրագրային և ներդրումային աջակցությամբ սոց ներդրումների և տարածքային կառավարման հիմնադրամի կողմից իրականացվող համաբուժարանի շենքի կապիտալ հիմնանորոգումը կհասցվի ավարտին: 2018 թվականին համայնքի ավագանին հաստատել է պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու ծրագիրը, որը կուղղվի Ստեփանավան համայնքի քաղաքային զբոսայգու հիմնանորոգմանը 25 մլն դրամ արժողությամբ: Քաղաքային և գյուղական համայնքներում համայնքային բյուջեից կներդրվի 5 մլն դրամ սպորտային և խաղային հրապարակների ու բակերի բարեկարգման համար:

**Ուրասար** գյուղում հիմնախնդիրները շատ են, գրեթե բոլոր ոլորտներում անհրաժեշտություն կա վերակառուցելու, արդիականացնելու, բարեկարգելու և այլն, սակայն կան նաև այնպիսի չլուծված խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում: Դրանց լուծման համար անհրաժեշտ է պետական աջակցություն, որը հնարավորություն կտա իրականացնելու մեծ ծախսեր պահանջող առաջնային անհրաժեշտության հիմնախնդիրները՝ համայնքի տարածքում պետության կողմից

նախատեսվող ծրագրերն են՝ համայնքի 1936թ.-ին կառուցված խմելու ջրատարի 6 կմ ներքին և արտաքին ցանցի վերակառուցումը.

- համայնքի մշակույթի տան հիմնանորոգումը
- միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը համայնքի տարածքում մասնավոր ընկերության կողմից նախատեսվող ծրագրերն են՝
- համայնքի գերեզմանատան ցանկապատումը
- համայնքի փողոցային լուսավորության ցանցի կառուցումը:

**Կաթնաղբյուր** գյուղական տարածքում գալիք հինգ տարիների համար պետության և համայնքի կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Հիմնանորոգել միջհամայնքային՝ Ստեփանավան – Կաթնաղբյուր ճանապարհը, որը կնպաստի ապրանքափոխադրումների ինքնարժեքի նվազեցմանը ինչն էլ կխթանի համայնքի տնտեսական զարգացմանը:
- Մասնավոր ընկերությունների ներգրավմամբ գյուղում հիմնել Կաթի վերամշակման ձեռնարկություն, որը կխթանի անասնագլխաքանակի աճին, կկրճատի արտադրանքի տեղափոխման ծախսերը, կստեղծի նոր աշխատատեղեր:
- Տեղացի և արտասահմանյան բարերարների միջոցներով հիմնել ինժեներական լաբարատորիա, ինչը կխթանի տեխնոլոգիական ոլորտի ընկերությունների և համայնքի միջև կապին, կնպաստի նոր որակի մասնագետների և ձեռներեցների ձևավորմանը:

## 2.4. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

